«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի
գլխավոր քարտուղար՝ պարոն Ա. Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան,

Կից Ձեզ է ներկայացվում «ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի կողմից հաստատված՝ ՈԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով գնման պայմանագրի նախագծի երկու բնօրինակը:

«ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Ղազարյան _____
(ստորագրություն)

Կ.Տ

09.01.2026թ

Հավելված N1
«ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01» ծածկագրով մեկ անձից
գնման ընթացակարգի հրավերի

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի
գլխավոր քարտուղար՝ պարոն Ա. Հարությունյան

ՀԱՅՏ

«ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Սույնով «ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի կողմից կազմակերպված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված մեկ անձից գնման ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, «ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գնով

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	գնումների համակարգողի ծառայություններ	200000 Երկու հարյուր հազար		200000 Երկու հարյուր հազար

«ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Հ. Ղազարյան _____
(ստորագրություն)

Կ.Տ

«09» հունվարի 2026թ.
(ամսաթիվը, ամիսը)

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01

ք. Երևան «09» հունվարի 2026թ.

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հարությունյանի (այսուհետև՝ Պատվիրատու), որը գործում է «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Հ. Ղազարյանի (այսուհետև՝ Կատարող), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ կարգավորվող գնման գործընթացների համակարգման և կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ Պատվիրատուի կողմից տրամադրված ելակետային տվյալների հիման վրա և սույն պայմանագրով սահմանված դրույթներին համապատասխան, որը ներառում է՝

1.1.1. Ծառայության նպատակը

Պատվիրատուի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ենթաօրենսդրական ակտերի պահանջներին համապատասխան՝ պատշաճ և արդյունավետ գնման գործընթացների համակարգում և կազմակերպում:

1.1.2. Ծառայության բնույթը և բաղադրիչները

- Գնման գործընթացների կազմակերպման և համակարգման խորհրդատվական աջակցություն
- Գնման ընթացակարգերի փուլերի պլանավորում և վերլուծություն
- Գնման ընթացակարգի կազմերպում և դրա շրջանակներում քարտուղարի գործառույթների իրականացում՝ անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության ապահովմամբ
- «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների, պարտավորությունների, բացառությունների վերաբերյալ խորհրդատվություն

1.1.3. Ծառայության մատուցման եղանակը և ժամկետները

- Ծառայությունը մատուցվում է հետևյալ ժամանակահատվածներով՝

1. 09 - 31.01.2026թ
2. 01 - 28.02.2026թ
3. 01 - 15.03.2026թ

- Ծառայությունը մատուցվում է հեռավար եղանակով, սակայն անհրաժեշտության դեպքում Կատարողը պարտավորվում է իրականացնել նաև այցելություններ Պատվիրատուի գտնվելու վայր:
- Աշխատանքային ժամանակացույց՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00, ընդմիջումով՝ 13:00-14:00:

1.1.4. Պահանջվող որակավորում

Ծառայությունը պետք է մատուցվի անձի կողմից, ով՝

- Ունի գնումների մասնագետի որոկովորում
- Ունի ՀՀ գնումների ոլորտում առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ
- Տիրապետում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի, ինչպես նաև համապատասխան կառավարության որոշումների և կարգերի դրույթներին
- Ունի գործնական փորձ գնման ընթացակարգերի, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների կազմակերպման և փաստաթղթերի մշակման ոլորտում

---

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի 1.2 կետում նշված դրույթներին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի 1.2 կետով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Պայմանագիրը և Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված հանձնման-ընդունման փաստաթղթերը Կատարողին ներկայացնել էլ փոստի միջոցով հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել սույն պայմանագրի 1.2 կետում նշված դրույթներին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3. Գնման գործընթացների համակարգման և կազմակերպման համար պահանջվող տվյալները գնումների համակարգողին տրամադրել Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրի դրույթներով սահմանված ժամկետներում:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պայմանագիրը և Պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված հանձնման-ընդունման փաստաթղթերը Պատվիրատուին ներկայացնել էլ փոստի միջոցով հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն Պայմանագրի 1.2 կետով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայությունների մատուցումը իրականացվում է ըստ ժամանակահատվածների և յուրաքանչյուր ժամանակահատվածի մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը

Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին օրը ներառյալ տվյալ ամսվա մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման գործընթացը կազմակերպելու նպատակով Կատարողը Պատվիրատուին է տրամադրում (կամ էլ փոստի միջոցով ներկայացնում հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով) իր կողմից ստորագրված (կամ հաստատված էլեկտրոնային թվային ստրոգրմամբ)՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է (կամ հաստատված էլեկտրոնային թվային ստրոգրմամբ), եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված (և/կամ հաստատված էլեկտրոնային թվային ստրոգրմամբ կամ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով) հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:** Ընդ որում՝ ծառայությունների մատուցումն իրականացվում է ժամանակահատվածներով: Ծառայությունների մատուցման գները ըստ ժամանակահատվածների հետևյալն են.

Ժամանակահատվածը	**Գինը (ՀՀ դրամ)** **(Թվերով և տառերով)**
09-31.01.2026թ	80000 (ութսուն հազար)
01-28.02.2026թ	80000 (ութսուն հազար)
01-15.03.2026թ	40000 (քառասուն հազար)
Ընդամենը՝	**200000 (երկու հարյուր հազար)**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 1.2 կետին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման (ներառյալ էլեկտրոնային թվային ստրոգրությունը) պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար

առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը

կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N2.1 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ	**Կ ա տ ա ր ո ղ**
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ	«ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1թղմ. 27շ. 8բն.
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900011019057	Հ/Հ 220533331132000
ՀՎՀՀ 00171676	ՀՎՀՀ 00139711
	էլ. հասցեն՝ info@smarttender.am
	հեռ. 099033539, 099905335
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան	տնօրեն՝ Հ. Ղազարյան
Ստորագրող ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 3002740160 2026-01-09 16:31:46 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից eID	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
« 09 » հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

ՀՀ դրամ

Ծառայության															
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	79411210-1	գնումների հետ կապված խորհրդատվական ծառայություններ	80,000	160,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	200,000	**200,000**

- *Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

Պ ա տ վ ի ր ա տ ո ւ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
ՀՀ, ք.Երևան 0009, Կորյունի փող. 15,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011019057
ՀՎՀՀ 00171676
Գլխավոր քարտուղար՝ Ա. Հարությունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«ՍՄԱՐԹ ՏԵՆԴԵՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 1թղմ. 27շ. 8բն.
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220533331132000
ՀՎՀՀ 00139711
էլ. հասցեն՝ info@smarttender.am
հեռ. 099033539, 099905335
տնօրեն՝ Հ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
« 09 » հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_ _» «__ __» 201 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 09 » հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 3
« 09 » հունվարի 2026թ. կնքված
N ԿԿՀ-ԳՆ-ՄԱԾՁԲ-26/01 ծածկագրով
գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.